

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

()տարագրաբացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусака“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Կայի կիրակի և տոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լիգուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

Համալսարանը փոփոխում է իւր իւր տեսակները: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա: Թիւրքիա: Վրաստան: Հեռագրեր: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական: Չեռնարկ: Կուսակցութիւնների ձեւեր և առարկաներ ընկերութիւններ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Վերջին ժամանակները ուսուցչական անդամ մայրաքաղաքի լրագիրները սկսեցին աւելի և աւելի խօսել Թիֆլիսի մէջ համալսարանի հիմնելու անհրաժեշտութեան մասին:

Մենք վաղուց է, որ յարուցեցինք այդ խնդիրը «Մշակ» մէջ, քննելով նրան այլ և այլ տեսակէտներից և նոյնպէս հասանք այն եզրակացութեանը թէ ճշմարիտ շատ ցանկալի կը լինէր որ այժմ մի համալսարանի հիմնվէր Թիֆլիսում:

Բայց այդ տեսակ ծանր գործերի մէջ ամեն բան չը պէտք է բարձել տէրութեան վրա, հասարակութիւնն էլ իր կողմից, պէտք է իր բարոյական ազդեցութեամբ և նիւթական օժանդակութեամբ նպաստէ համալսարանի պէս նշանաւոր հիմնարկութեան երկրի մէջ իրագործելուն:

Մենք չենք կամենում կրկնել այստեղ այն բոլոր ապացոյցները, որ շատ անգամ բերեցինք մեզ մօտ

համալսարանի գոյութեան անհրաժեշտութիւնը բացատրելու համար: Այս անգամ մենք կը կամենայինք նայել խնդրի վրա բոլորովին մի նոր տեսակէտից:

Ռուսաստանը մեծ կոչում ունի արեւելքում: Այդ գաղափարը գուցէ հերքում են Ռուսաստանին թշնամի եւրոպական մի բանի լրագիրները, բայց այնու ամենայնիւ Ռուսաստանի քաղաքակրթիչ կոչումը արեւելքում անուրանալի է:

Այդ գաղափարի ճշմարտութիւնը պարզ հասկանում է և ինքն կառավարութիւնը: Օրինակ Թիւրքաց և պարսից հայերի վերաբերութեամբ վաղուց է որ Ռուսաստանը աշխատում էր իր բաղադրութիւն ազդեցութիւնը տարածելու հայ երիտասարդութեան համար այս կամ այն տեղ դպրոցներ հիմնելով կամ գիտաւորութիւն ունենալով հիմնելու:

Պարզ է, որ եթէ Ռուսաստանը ուղեւոր հիմնել մի հայոց դպրոց Ա. Պոլսում, նա ազդեցութիւն կունենար Թիւրքիայի հայ երիտասարդութեան վրա: Ուրիշ խնդիր է թէ որչափ կարող էր աշողլել այդ տեսակ դպրոց: Նոյն պաշտօնը կարող էր կատարել և թէօգօսիայի խալիպեան ուսումնարանը, եթէ շարունակէր իր գոյութիւնը: Մեզ թւում է որ մասամբ նոյն նպատակով հիմնվեցաւ և Օդէսայի համալսարանը: Բայց այդ վերջինը, ի հարկէ չէ

կարող իր ազդեցութեան կողմից համեմատվել դիցուք խալիպեան դպրոցի հետ, որտեղ առարկաները հայերէն լեզուով էին աւանդվում, այն ինչ Օդէսայի համալսարանը մտնելու համար Թիւրքիացի հայը պէտք է ուսերէն սովորի, որ նրան շատ դժուար է և գրեթէ անհնարին է: Ֆրանսերէն լեզուն շատերը Թիւրքաց հայերից մանկութենից սովոր են և Թիւրքիայի շատ դպրոցներում առարկաները ֆրանսերէն լեզուով են աւանդվում:

Մեր կարծիքն այն է, որ Ռուսաստանը ահալին ներգործութիւն կունենայ Պարսկաստանի և Թիւրքիայի հայերի վրա, եթէ հիմնելով մի համալսարան Թիֆլիսում, թոյլ կը տայ որ համալսարանի ամբիօններից գիտութիւնը աւանդվէր անխտիր թէ ուսաց և թէ հայոց լեզուով:

Մենք կարող ենք օրինակներ բերել եւրոպական համալսարաններից, ինչպէս օրինակ շվեյցարական Բազել քաղաքի համալսարանը, որտեղ առարկաները աւանդվում են և ֆրանսերէն և գերմաներէն լեզուով, նոյնպէս Բոհեմիայի Պրագա քաղաքի համալսարանը, որտեղ գիտութեան մէջ անխտիր գործ են դրվում երեք լեզուներ՝ չեխերէնը, գերմաներէնը և լեհերէնը, վերջապէս կը յիշենք այստեղ նոյն իսկ Ռուսաստանի երկու համալսարանների մասին:

Հելսինգֆորսի և Դոբրպաուի համալսարանների մասին, որոնցից առաջինի մէջ գիտութիւնները աւանդվում են շվեդերէն լեզուով, իսկ երկրորդի մէջ գերմաներէն լեզուով: Դորանց նպատակն է՝ միմի ազդել հարեան շվեդական տարրի վրա, իսկ միւսի գերմանականի վրա:

Դա գուցէ փաստակար միտք կը լինէր ասել օրինակ, որ պետական միջնակարգ դպրոցներում առարկաները ոչ թէ պետական լեզուով դաս տրվէին, այլ այս կամ այն տեղական ազգային լեզուով: Բայց համալսարանի գիտութիւնը, բարձրագոյն ուսումը ազատ է և հասունացած մարդկանց համար է աւանդվում: Բարձր գիտութեան մէջ ինչ լեզու կը գործածվի, դա մի և նոյն է, միայն թէ ճշմարիտ գիտութեան խօսքը լավ էր ամբիօնից:

Իսկ եթէ հայոց լեզուն թոյլ տրված լինէր Թիֆլիսի համալսարանում ուսաց լեզուի հետ հասարակ կերպով գործածվէր, դա անասելի մեծ և ազդու միջոց կը լինէր գրաւել դէպի մեր համալսարանը պարսից և Թիւրքաց հայ երիտասարդութիւնը, որ գնում է ու գիտէ ուր, Փարիզ, կամ ուրիշ տեղ, կորչում, անհետանում է օտարութեան մէջ....

Որպէս կուսակիցներ ուսաց ազդեցութեան արեւելքում և մասնաւոր հայաստանում, մենք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԵՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՁԵՆԵՐ

ԵՒ

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

II

Առաջիկայ գլխում մենք աշխատեցինք ծանօթացնել ընթերցողին մի քանի նորութիւնների, մի քանի նշանաւոր տարրերի հետ, որոնց գոյութիւնը և կամ չգոյութիւնը որոշում են ձեռնարկութեան այս կամ այն ձեւը ընտրելու համար: Մենք չը ցանկացանք նիւթը բոլորովին սպառել, այլ ակնարկեցինք այս և այն կէտի վրա մեր խօսակցութեան առարկայի վրա միայն մի գաղափար տալու համար: Այս անգամ մենք կը զբաղվենք այն ձեռնարկութիւններով, որոնք խալիպէս գոյութիւն

ունեն բոլոր լուսաւորված երկրներում և այդ մենք կանենք մեծաւ ուրախութեամբ, ի նկատի առնելով հայերի դերը գործունէութեան այդ առարկայում: Բայց տեսէք, թէ որքան յետ է մնացած հայը և այդտեղ: Մի աղբ, որ այդքան մեծ դեր է խաղում և կամ պիտի խաղայ ոչ թէ միայն Հայաստանում, այլ և նորա սահմաններից շատ հեռու, փորձ-Սօթայի մի մեծ մասում և կովկասում այլ երկրներում, չէ կարող և չը պիտի անտարբեր աչքով նայէ այն բոլոր նորանոր հիմնարկութիւնների վրա, որոնք անասական յառաջադիմութեան ծնունդ են: Մինչ այժմ գոնէ հայը անտարբեր էր: Արդիւնում արդէն սկսել են այդ հիմնարկութիւնները տալ գնդ, բայց բոլորն էլ համարեա օտարականների ձեռքով: Օրինակ, ինչ պիտի աւելի ընտան լինէր, եթէ մի հայ ընկերութիւն կազմվէր կովկասեան ապրանքները, որոնք մեծ մասամբ հայերի ձեռքն են, Ռուսաստան և Եւրոպա առաքելու համար: Եթէ չեմ սխալվում, բոլոր առաքման ընկերութիւնները ուսմանի և այլ օտարականների ձեռքերում են: Ոչ մի հայ ընկերութիւն չը կայ, որ անփական նաւեր ունենայ զանազան ծովերում, բայց ոչ, սխալվում ենք: Մի այդպիսի ընկերութիւն կազմվէր Մարտիյում այնտեղի հայերից: Վշակի լրագիրը մինչև անգամ մի քանի հեռագրեր էլ ստացաւ նորանցից, որոնք

ընկերութեան բացումն էին աւետում: Նորան միջոցներ մինչև անգամ «Արեւելեան» չը գիտեմ թէ «Արաբատեան» անունով: Ինչ դառաւ նա, հէնց որ ուսաց պատերազմը սկսեց, հաղորդակցութիւնը փոթի ու Մարտիի հետ առ ժամանակ կտրվեց, ընկերութիւնն էլ կտրուեց, լաւ է ասել «բանդվեց»: 5-600 հաղար ֆրանկով գնած շոգենար 3-400 հաղարով կրկին վաճառեցին մի ֆրանսիական ընկերութեան....

Ոչ մի հայկական ապահովութեան ընկերութիւն չը կայ, այդ բոլորն էլ օտարների ձեռքն են: Ինչ խօսենք հայա բանկային հիմնարկութիւնների մասին, որոնք համարեա բացի Թիֆլիսից, ոչ մի տեղ մեղանում արժատ չէ բռնած: և որքան կարողութիւն... Ոչ մի քաղաք չունի դեռ մի հատ խնայողական հիմնարկութիւն, որը այնքան բարի հետևանքներ կարող է ունենալ ազգատ ու միջին կարգի ժողովրդի համար, որպէս փաստը ցոյց է տալիս Եւրոպայում: Եւ և այլն այլն: Շարունակեց մեր առարկան:

Չեռնարկութիւնների ձեւերը ընտրելու համար, ամենաշնորհաւոր հարցն այն է, թէ ինչպէս են կարողազդած պատասխանատուութեան, երաշխաւորութեան կողմից՝ նպաստ երաշխաւորութեան ձեւերին, ընկերութիւնները ստանում են նմանապէս զանազան ձեւեր:

Հետևելով պարոն Էմմինգհաուսին *), բաժանեք պատասխանատուութեան կերպերը հինգ ձեւերի:

1. Նախ կարող է միայն ընկերութեան կարողութիւնը երաշխաւորել:
2. Երկրորդ, կարող է նախ միայն ընկերութեան կարողութիւնը երաշխաւորել, իսկ եթէ սա չը բաւեցնէ, այն ժամանակ ընկերակիցների աւանձին կարողութիւններն էլ երաշխաւոր են և այստեղ բոլոր ընկերներն էլ համեմատաբար պատասխանատու են:
3. Երրորդ, նախ ընկերութեան կարողութիւնն է երաշխաւոր և բացի դրանից, ընկերների մի մասը անձամբ անձին, իսկ ըստ պահանջի, նաև բոլոր անդամները:
4. Չորրորդ, կարող է չը վնաս երաշխաւորութեան ընկերական կարողութիւն, այլ երաշխաւոր են մասնակիցները անձամբ անձին և հաստատապէս:
5. Հինգերորդ, կարող է, որպէս վերին, չը վնաս երաշխաւորութեան ընկերական կարողութիւն, այլ ընկերները պատասխանատու են այն բոլոր պարտաւորութիւնների համար, որոնք ընդհանուր գործին են միայն վերաբերում, և այն խրաբանչիւր իր բաժնի համեմատ:

Նպած երաշխաւորութեան այդ ձև ու տեսակ...
*) A. Emminghaus Zur Lehre von den Erwerbsgesellschaften

